ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՄԱՆՈՒԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԿԱԹՅԱՆԻ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը խորը ցավով տեղեկացնում է, որ 2004 թ. փետրվարի 11-ի երեկոյան Ալմելո քաղաքի հիվանդանոցում վախճանվել է Երուսաղեմի հայոց Պատրիարքության Սրբոց Հակոբյանց վանքի միաբան, Հոլանդիայի հայ համայնքի հոգևոր հովիվ Հոգեշնորհ Տ. Մանուել վարդապետ Երկաթյանը:

Հանգուցյալ Հայր Սուրբը ծնվել է 1954 թ. Կ. Պոլսում: Հոգևոր կրթությունը ստացել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում: 1968-1973 թթ. ուսումնառության տարիներից հետո վերադարձել է Կ. Պոլիս:

1976 թ., ձեռամբ Կ. Պոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1977 թ. անդամագրվել է Երուսաղեմի հայոց Պատրիարքության Սրբոց Հակոբյանց միաբանությանը:

1980 թ. արձակուրդներին վերադառնալով Ստամբուլ՝ ձերբակալվել է և քաղաքական մեղադրանքով դատապարտվել 5 տարի ազատազրկման:

1991 թ. ի վեր իբրև հոգևոր հովիվ ծառայում էր Հոլանդիայի հայ համայնքում:

Կիրակի, փետրվարի 15-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ս. Պատարագից հետո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն հոգելույս Հայր Սուրբի հոգու հանգստության համար:

Հայր Սուրբի մարմինը հողին հանձնվեց Ալմելոյի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցու բակում:

«Ցիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ